

Արդյո՞ք ես ձեռներեց եմ

Աղբյուր՝ ՄՔԱՅ համայնքային նախաձեռնողական ակումբների երիտասարդների ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ոլորտում հմտությունների զարգացման ուղեցույց, Վորլդ Վիժն Հայաստան, 2016)

Ընթերցեք ստորև ներկայացված 10 հմտությունները, որից հետո առաջարկված հարցերի միջոցով գնահատեք ձեր ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ հմտությունների: Գրի առեք զարգացման և կատարելագործման հնարավոր ուղիներ:

Ձեռներեցի հմտությունը		Արդյո՞ք ես ունեմ նման հատկանիշ	Այո/ Ոչ	Եթե ոչ, ապա ինչպես կարող եմ այն զարգացնել
ՆԱԽԱՁԵՐՆՈՒԹՅՈՒՆ				
1. Հնարավորությունների որոնում, նախաձեռնություն	Ձեռներեցը նա է, ով փնտրում է հնարավորություններ: Որտեղ այլ մարդիկ խնդիր են տեսնում, ձեռներեցը հնարավորություն է գտնում և այդ հնարավորությունը վերածում է շահավետ բիզնեսի:	Ես միշտ պատրաստ եմ որևէ քայլ նախաձեռնել		
		Ես օգտագործում եմ անսովոր հնարավորությունները գործ սկսելու համար		
2. Հաստատակամություն	Ձեռներեցը համառորեն շարունակում է աշխատել՝ անկախ խոչընդոտներից: Երբ մարդկանց մեծ մասը կիրաժարվեր գործելուց, նա շարունակում է աշխատել:	Ես հաստատակամորեն շարժվում եմ նպատակիս իրականացմանը՝ անհրաժեշտության դեպքում փոխելով մոտեցումը		
		Ես անձամբ պատասխանատու եմ իմ նպատակների իրականացման համար		
3. Պարտավորությունների կատարում	Ձեռներեցն իր խոսքի տերն է: Նա կատարում է խոստացածը՝ անկախ անձնական հանգամանքներից:	Աշխատանքս կատարելու համար ես պատրաստ եմ անձնական զոհողությունների գնալ		

		Աշխատանքը կատարելու համար ես օգնում եմ թիմակիցներին, կամ պատրաստ եմ աշխատել նրանց փոխարեն		
4. Որակի և արդյունավետության պահանջ	Ձեռներեցը խորապես տարված է արդյունավետությամբ և որակով՝ գործել ավելի արագ, լավ և խնայողաբար: Այս մոտեցումն արտացոլվում է իրենց աշխատանքի բոլոր ոլորտներում:	Ես միշտ գտնում եմ ավելի արագ, լավ և խնայողաբար գործելու տարբերակ		
		Ես միշտ հսկում եմ, որպեսզի իմ աշխատանքի արդյունքը համապատասխանի կամ գերազանցի ընդունված ստանդարտները		
5. Ռիսկերի հաշվարկում	Ձեռներեցության հիմնական գործոններից մեկը ռիսկերի հաշվարկումն է: Ձեռներեցը պատրաստ է ռիսկի դիմել և նոր ուղի ընտրել՝ բայց ռիսկը պետք է լինի մտածված և հաշվարկված:	Ես պատրաստ եմ ռիսկային կամ խնդրահարույց իրավիճակներում գտնվել		
		Ես հաշվարկում եմ ռիսկը և գնահատում եմ այլընտրանքային ուղին		
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ				
6. Նպատակատուղի-վածություն	Ամենակարևոր հմտությունն է, քանի որ մնացածն անիմաստ են առանց այս հատկանիշի: Ձեռներեցը հստակ նպատակ ունի: Նա գիտակցում է, թե ինչու է զբաղվում այդ գործով: Նա միշտ մտածում է ապագայի մասին և պլանավորում է այն:	Ես իմ առջև կարևոր նպատակներ եմ սահմանում, որոնք և՛ դժվար են, և՛ գոհացնող		
		Ես նաև կարճաժամկետ և չափելի խնդիրներ եմ սահմանում ինձ համար		
7. Տեղեկատվության որոնում	Ձեռներեցը չի ընդունում անորոշություն կամ ենթադրություններ: Նա ուրիշների	Ես անձամբ տեղեկատվություն եմ հայցում ինձ հետաքրքրող հարցերի և		

	վրա հույս չի դնում՝ տեղեկացվածության առումով: Ձեռներեցը տեղեկատվություն է փնտրում իր հաճախորդների, մատակարարների, տեխնոլոգիաների և այլ հնարավորությունների մասին:	նախաձեռնությունների վերաբերյալ		
		Ես դիմում եմ փորձագետներին՝ գործարար, կրթական, ֆինանսական կամ տեխնիկական խորհրդատվության համար		
8. Համակարգված պլանավորում և հսկողություն	Համակարգված մոտեցումը նշանակում է «կարգավորված, տրամաբանական»: Պլանավորումն էլ հետագա քայլերի որոշումն է: Հսկողությունն անհրաժեշտ է առաջընթացը ստուգման ենթարկելու համար:	Ես պլանավորում եմ՝ հիմնական նպատակը մի քանի ենթանպատակների բաժանելով և հստակ ժամանակացույց սահմանելով		
		Ես պատրաստ եմ վերանայել իմ պլանները հանգամանքների փոփոխության դեպքում		
ՆԵՐՔԻՆ ՈՒԺԵՐ				
9. Հաղորդակցում և համոզմունքների տարածում	Այս հմտությունը բնութագրում է ձեռներեցի ռազմավարությունը՝ այլ մարդկանց վրա ազդելու կամ նրանց որևէ քայլի դրդելու վերաբերյալ: Հաջողված հաղորդակցման ռազմավարությունը կախված է բոլոր մասնակիցներից:	Ես օգտագործում եմ կարևոր մասնակիցներին իմ նպատակներին հասնելու համար		
		Ես նպատակաուղղված կառուցում եմ գործարար և մասնագիտական ծանոթությունների ցանց		
10.	Այդ հմտություններն արտահայտում են ձեռներեցի համոզմունքը սեփական	Ես ձգտում եմ ազատվել ուրիշների վերահսկողությունից և կանոններից		

<p>Անկախություն և ինքնավստահություն</p>	<p>կարողությունների և ներուժի վերաբերյալ: Դա այն ներքին համոզմունքն է, որ մղում է նրանց հաղթահարել խոչընդոտները: Մեփական ուժերին վստահելը նշանակում է ամբողջական պատասխանատվություն ստանձնել սեփական նախաձեռնությունների համար:</p>	<p>Ես վստահ եմ, որ կարող եմ հաղթահարել խնդրահարույց կամ դժվար իրավիճակ</p>		
--	---	--	--	--